## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ՔԱՂԱՔԱՑԻ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱ-ՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 309.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍ-ՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող լրացուցիչ նյութերի ուսումնասիրման անհրաժեշտությունից ելնելով, Հայաստանի Հանրապետության սահմա-նադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի հիմքով վերսկսել՝ «Քաղաքացի Ա. Մանուկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարու-թյան օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը:

2. Սահմանադրական դատարան ներկայացված լրացուցիչ նյութերի ուսումնա-սիրման համար ՍԴ անդամներին եւ կողմերին ժամանակ տրամադրելու նպատակով վերսկսված գործի դատաքննությունը հետաձգել մինչեւ 2010թ. մարտի 19-ը, ժամը 12.00:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**
**Ա Ն Դ Ա Մ** **Վ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

16 մարտի 2010 թվականի
ՍԴԱՈ -20